ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ УПРАВЛЕНИЕ

N 01-58
«05» 06 2017թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա . Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի մայիս ամսվա ընթացքում արձակված կարգադրությունը, ընդունված որոշումներ չկան:

Առդիր՝ 3 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 մայիսի 2017 թվականի 5-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 25-րդ կետի , 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի մայիսի 20-ի N 02/10/1972-17 գրությունը.

Կարգադրում եմ

1.2017 թվականի մայիսի 27-ին համայնքում կազմակերպել և անցկացնել շաբաթօրյակ: Շաբաթօրյակի աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Ռ. Ավագյանին) կազմակերպել և հսկողություն իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում անցկացվող շաբաթօրյակի աշխատանքների նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնել ներքոհիշյալ հանրային տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքներին՝

1) համայնքի հուշարձանների տարածքներին.

2) գերեզմանատան տարածքին.

3) տեղական նշանակության ճանապարհների հարակից տարածքներին.

4) ոռոգման սեզոնի հետ կապված առուների եզրերին եղած հողակույտերի վերացմանը:

3. Շաբաթօրյակի աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ակտիվ բնակիչներին, համայնքի վարչական տարածքում առկա կազմակերպություններին:

4. Շաբաթօրյակի աշխատանքները պատշաճ կերպով կատարելու համար ապահովել անհրաժեշտ գործիքներով, իսկ հավաքված աղբը տեղափոխելու համար՝ տեխնիկայով:

5. Հանձնաժողովին՝ (Ռ. Ավագյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ օրվա ընթացքում պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել համայնքի ղեկավարին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՈՍԿԵՀԱՏ Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2017 թվականի մայիսի 20

գ. Ոսկեհատ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Ոսկեհատ

համայնքի ղեկավարի

2017 թվականի մայիսի _20_-ի

N 5-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ – Ռ. Ավագյան գյուղապետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Ալեքսանյան – աշխատակազմի առաջատար մասնագետ

Գ. Նադանյան - աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների աշխատակից

Ս. Շմավոնյան - << Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն:

Գ.Եղոյան - ընտանեկան բուժքույր

Գ. Նադանյան - բուժքույր

Ս. Դիշլանյան– համայնքի ավագանու անդամ.

Ա. Գյոզալյան– համայնքի ավագանու անդամ.

Ն. Խաչատրյան. – համայնքի ավագանու անդամ: